

թեան ատեն, Ավստրիոյ և Պրուսիոյ պատգամաւորաց հետ անմիաբան ըլլալէ, և ամեն կարեւոր վիճելի խնդրոց մէջ փութալ անոնց հետ համաձայնութիւն պահել, վասնզի յիշեալ գերմանական երկու մեծ Տէրութեանց պատգամաւորներն ալ մի և նոյն կերպիւ ընթանալու ստատուէր ստացերեն:

— Լոնդոնի խորհրդակցութիւնն անցեալ ամսեան 25ին բացուելով, նիստերն, չարաթիւ մէկ երկու անգամ կըլլան: Կըսուի թէ ամէլի նիստին Ֆրանսա և Անգլիա զինադադար ուսալարկերեն, զոր գերմանական Ղիետի, Ավստրիոյ և Պրուսիոյ պատգամաւորներն « իշխանութիւն չունին » ստատախմբելով ժամանակ խնդրերն որ իրենց տէրութեանց իմացեն եւ հրահանգ խնդրեն: Գերմանացոց պատճառարանութեան նպատակն շատ նրբատեսութեամբ վարագործեալ է, զոր կենցաղադէտը միայն կարենան նշմարել: Պրուսիա ժամանակ չափի կողմէ որպէս զի Գերմանիոյ առաջնորդութիւնն լաւեւ իր ասիին մէջ ամբողջէ, որուն ի վաղուց հետէ կըսուի, և, Գիւլիմիւրի դարեաց վերայ, եթէ կարելի է, նոր դարեւորներ շարք. ապա թէ ոչ երբ ամենայն ոք գիտէ թէ խորհրդակցութեան անկիւնիքարն ըլլալու էր զինադադարն, ինչպէս կարելի է որ Պրուսիական Վեհախառութիւնն միայն չգիտնար զայն և ըստ այնմ իր պատգամաւորն չհրահանգէր: Չգիտեմք թէ ինչ կանցնի խորհրդակցութեան մէջ. այլ Աստուած գիտէ թէ ինչ վախճան ունենալու է: Խորհրդակցութիւնն, որոյ ամէլիքայլերն այսպիսի արտաւայտ պատճառով ջղակոտոր կըլլան, զոր Անգլիոյ լրագրիւններն մէկն իրաւամբ կնկարադրէ՝ ըսելով թէ Ավստրիա և Պրուսիա տիրակցութեան ճամբու վերայ բարեւ կնեւեն զայն անգնայ ընելու համար:

— Ամերիկայէն եկած լուրերն երկու ներհակ բանակաց շարժումն կժամուցանեն: Լի 10 աւուր սրաշար առնելով դէպ ի Հիւսիս կըսուի, և Լոնգսթրիտ՝ դէպ է Ենանիոյ ճարն, և Վիրգինիա կոչու բացուել է: Ֆեդերալներու Լոյսիսիստ կեղծ ջարդն կատուգուի. այլ ասոր վերայ կ'յաւելցնեն թէ Կոնֆեդերէններն հետեւեալ օրն յաղթութեան են և երեք զօրավար կորուսեր: Մէկ շատ ալ նաւակաւորներու լուրեր կան, ամենն ալ, Հարաւայնոյ շահաւոր:

— Տունիսի և Ալգերիոյ տապաւնութիւններն օր աւուր կատաղանան և կժամաւորն: Իտալիա ալ Տունիս երեք նաւ խրկեց:

— Լոնդոնի բանքն չափի կտուրն, (discount) Մայիսի 2ին հարիւրին 8ի հանեց, որ յառաջ 7եր. և 5ին, կամ երեք օր յետոյ, զայն 9ի հանեց: Ամեն մասնագիր և պարտագիր (ակիսիոն և օրիդատիոն) Ֆրանսա և Անգլիա իջան, զրաւմի սղեց և շահն բարձրացաւ:

ԳՍԱՆՈՒԲԵԱՆ ԻՇԽԱՆԱԹԻՒՆԵՐ

Կուգա իշխանի յոյժած խորհրդներն մեծ մեծ գծաւորութեանց կհանդիպին: Բարձրագոյն Գլուխ իմացուց անոր ար, առանց իր հաճութեան անկիւն ինչ և ինչ փոխառութիւն ընելու իրաւունք չունի: Ասով Օսմանեան կատաղութիւնն կերեցուն թէ չուզեր բնաւ ձեռքէ հանել հայտատարութեան կապերն, որք կկապեն Գանուրեան իշխանութիւններն իրեն հետ:

Իշխան Կուգայի, անոր կառավարութեան և Խորհրդարանի ամեն որոշմունքն, ինչպէս են վանորէի կառուածոց գրաւումն, ժողովրդեան զինուորին և գիւղական օրէնքն անգամ անգործադրելի պիտի մնան: Բանի որ ստակ չկայ զանոնք յառաջացնելու համար: Եթէ Բ. Գ. անփոփոխ մնայ իր որոշմանց մէջ, դանուրեան իշխանութիւններն խիստ նեղութեանց հանդիպին պիտի, վասնզի Անգլիայի գրաւատէրերն Բ. Գ. որոշումներն լսելով՝ հրաժարեցան փոխառութենէ: Իշխան Կուգայի յոյսն մնացեր է Ֆրանսայի վերայ:

Պուսիոյ կառավարութիւնն 12-14,000 զօրաց մէկ բանակ կապտարատէ Բեսարաբիա. վասնզի անվտանգութեամբ կնայի անկիւն համակրութեան այն ամեն յայտարարութեանց վերայ, զոր Մուրադ և Վալարբ Լէհացոց կցնեն:

Վիեննայի Ընդհանուր Թորակցութիւն.

ՖՐԱՆՍԱ

Սի Սելիման Բեն Համդա, որ Արու-Բէրի ցեղէն կիջնայ և մեծ ազդեցութիւն ունի Ալիբիէի Արաբ ցեղերու վերայ, Բուրէն գլխաւորէն մէկ ապստակ ուտելով կամ, ըստ այլոց, անոր գրաւոր խորագրանի բանի մի հարուած ընդունելով, ապստամբեցաւ. և Ուլիդ Սիլի Ղի ցեղն աստտամբեցուց, որոց օրինակին հետեւեցան այլ հաւատարիմ տոհմեր: Տիտրեոյի հրամանատարն առնոց դէմ քալեց 300 զինուորով (որոց մէկ մասն Արաբ): Խառնուողի ատեն Արաբաց մէկ մասն ապստամբաց զին անցաւ. իսկ Ֆրանսայի եւ Սպանիա 11 ժամ ծեծկռուէն յետոյ՝ զրեթէ ամենն ալ սպանուեցան: Ապստամբաց նալա տակն է Եւրոպացոց զաղթականութիւնն արգիլել որ Ալգերի մէջ չծաղկի: Կյուսացուի որ ոչ անագան վտարանջութիւնն զսպուի:

— Պատրիի (լրագիր) մէջ կկարդամք: « Ալգերիէն նամակներ առինք, որք Օրան գաւառի հաւաքին կողմն և Բազարի շրջականներն պատահած խռովութեանց վերայ սակաւ մի տեղեկութիւններ կտան: Խռովութիւնն բաւական ծանր է, և Ալգերիի վարչութեան բրած զինուորական կարգադրութիւններն կարգաւորեցին, որուն զինուորութեան պաշտօնեայն փութացաւ օգնել անմիջապէս զօրք խաւրելով. այսու ամենայնիւ Տեղի գաղթելու համար վախ չկայ ամենին: »

« Բազարեոյի խմբի բանակին վերայ զիշեր ատեն յանկարծ յարձակուել են. եւ զխաղրութիւնն չէ կրցեր կարգաւոր ըլլալ: Կուգեն հաւատալ թէ Ֆրանսայի ամեն աստիճանաւորներն չեն մեռեր. եւ թէ անոնց մեծագոյն մասն հանդերձ Բազարեոյ զնաւապետովն զերի գնացեր են: Մէկ աստիճանաւոր միայն ազատուել է, այսինքն է սպա. հինգեր անոնաւորոյն: Անմիջապէս կազմուած եւ ապստամբաց դէմ խրկուած զօրաց թիւն է 1,500 հոգի, որք զիւրաւ զանոնք պաշարեն պիտի: Տուրնէն մեղ զրուած նամակն կըսէ թէ երկի Խորթագո շոգեման եւան երրորդ բաւալինն եւ հետեւեալ երեքտասաներորդ զնդի պահեստի (բաւալինն): Դեկտրա եւ Գոմեր շոգեշարժ Ֆրեդատներն ալ կազմուելու հրաման ընկալան, որ զօրք տոնելով՝ 48 ժամու մէջ ճամբաց ելլեն:

Կրակի հետեւեալ 87երորդ գնդի միացած երամներն ընկալաւ: »

— Ժառնալ դէ Դերա լրագիրն Սպիլի 28ին նշանաւոր մէկ յօդուած հրատարակեց Ֆրանսայի եկեղեցական գրոց մէջ Հոռու հրամանաւ եղած այլալուրութեանց վերայ, զոր, որքան կարելի է, ճշդիւ թարգմանելով մեր ընթերցողաց կհաղորդեմք եւ պարտք կհամարեմք անոր վերայ հրաւիրել մեր Հոռութեան համազգեստ, մանաւանդ րարեարոյ, հայրենասէր և կրօնասէր համազգեստ խորին ուշադրութիւն, վասն զի մեր, անձամբ անձին, շատ տեղ կարգացերեմք, շատ ևս լսեմք հոռութեան կարգաւորաց բերնէ թէ. Հոռութեան հաւատոյ միաբանութիւն միայն կրնուէ եւ ոչ թէ լեզուի, ծէսերու, արարողութիւններու, պաշտամանց և այլ եկեղեցական կարգաց եւ կանոնաց փոխառութիւն: Մեր, թէ և այսպիսի տախ բոլորովն անհիմն ըլլան գիտեմք եւ ի վաղուց գիտեմք. սակայն կարեւոր է որ ամեն ուղղափառ Հայ եւ Հոռութեան Հայ նոյնպէս զիտնան, որպէսզի երեկոյն Հայ անկողին մտնելով՝ վաղու Լատին չարթնան:

Արդէն Հոռութեան Համազգեստ եկեղեցական գրոց մէջ, 35 տարիէ ի վեր, որքան այլալուրի մտեր է, ասիկա զիւրին է երկու եկեղեցեաց Խորհրդատեւոր, Տօնացոյց եւ Ժամագիրք իրարու հետ համեմատելով՝ անձամբ անձին հասու ըլլաւ: Չեմք գանդաղիր յաւելու նաեւ թէ գուցէ, այլ ևս 35 տարի չանցած, մեր համազգեստ եկեղեցիներն ազգային լեզուն բոլորովն վերցուի. վասնզի ազգայն առջեւ ունիմք Տիեզերաց բոլոր Հոռութեաններն, այսինքն Անգլիայի, Իրլանդացի, Սպանիայի, Փորթուգալացի, Ֆրանսացի, Բելգիայի, Գերմանացի, Հոլանդացի, Մեքսիկայի, Բարագիլի, Լէհ և այլն, որոց հոռութեան մասերն լատիններն կաղթեմք, լատիններն կարտարուեն, որ, անտարակոյս, այնպէս չէր հին տոններն: Այլ եթէ յիշեալ բաղմամբիւ, զօրեղ, հայրենասէր, հրահանգեալ ազգերն Հոռու ճիւղներէն չազատեցան և այսօր, առանց ամենեւին մէկ բառ հասկնալու, լատիններն կաղթեն, ինչպէս որ սուրբ Մեսարէն առաջ, մեր ազգն՝ ատրերէն կաղթէր, կհարցնեմք թէ մեր ազգի հոռութեան ցրուեալ, սակաւամբիւ, մանաւանդ Վիեննայի մոնոքոններու, Կոլլեգիներու և Անտոնեաններու պէս կարգաւորաց հոլութեան յանձնուած մասն կրնայ պիտի հասարակաց նաւա կոծուի ենէն խաւրել. Աստուած տա որ խաւրելուց անցելու և ներկայի փորձն տարակուսի մէջ կձգէ զմեզ: Ինչ և ըլլան ազգային յեղակարծ զիպուածներն, այսչափ միայն կըսեմք թէ Սուրբ Կոլլեգի կ'ըստայ ամեն Հոռութեան լատին ընել. հետեւաբար, կյուսամ թէ մեր Հոռութեան եղբարց լաւաւոր, սղաւաւոր և հայրենասէր մասն այսօրուէն արթնութիւն ձեռք առնելով՝ իր ազգայնութեան նուիրական իրաւունքն զովելի առարկնութեամբ պահէ, եւ մինչ ցվերջին կէտն պահէ, իրեն հաւատարիմ աւանդապահ մէկ հին և փառաւոր ժողովրդեան:

Դառնամք այժմ մեր Դերայի յօդուածին, որ այսպէս կսկսի. « Բանի մի ժամանակէ ի վեր, մեր երեւելի թէմերն մէկն, այսինքն Լիոն, որ Գօլեբու ամենահին մայրաքաղաքն է, կրօնական կուրի տեսարան եղեր է, որ թէ և հոգիներն խորապէս խռովելու կարող չէ. սակայն ծանր դժուարութիւններ յառաջ կրերէ, և կրնայ նեղութիւններ

ուեց իր տարր հոգարարին համարել տարով : Արդ այն արարողութիւնն յանկարծ խտրանուեցաւ տանիքի քակուելովն : Հոն դառնուողներն, ամենն ալ, առաջին յարկէն գետնայարկն ինկան, որ մեծ չվորութիւնն պատճառեց . շատ մարդիկ թեթեւ կամ ծանր վէրք առին , բայց պապին բան չեղաւ ամենեւին . և անսպաշտ և տխմար մարդիկ ասիկա պապին յետապառնայիս տուին : »

« Այս տեսարանն առարկայ եղաւ մէկ հասարակ պատկերի, որ Վատիկանի մէկ դահլիճն մէջ դրուած է : Ասիկա նկարուեցաւ նաեւ գարշելի կերպիւ եկեղեցիին կից վանքի սրահի որմին վերայ : Այս երկու պատկերներու մէջ կտեսնուի որ Մարտի (Ստուտածածին) բռներէ և կարգապահէ Պապն . և չեն պակար մարդիկ , որք այս եղելութեան վաւերականութիւնն պնդեն և հաստատեն թէ իրենց աչօք տեսան այս հրաշալի օգնութիւն : Հրաշից պատմութիւնն այսպէս կգրեն (Հոմ) : Տիրող պապն եթէ մեռնի, շատ հաւանական է , որ վնասբաղնէր աշխատին : Անոր կրած ամեն վիշտերն , իր պատմութեան ատեն , պիտի համարուին իբրեւ երկար և ցաւագին մարտիրոսութիւն : Անոր հերոսական աստիճանի բրիտանիական առաքինութեանց , կրթութիւնն դժուարին չէ հաստատել . կիկայ հաստատել ազա երկու սրան , չեղագործութիւն (Չամուռնիին բարեխօս և սրաշտ պան ըլլան) , որք անշուշտ կարեւոր են , նախ երանելիութիւնն ստանալու համար , և որ սուր բերու սահմանեալ թուէն դեռ արտաքոյ միայն կամ սրբանալու համարութիւնն կնշանակէ (summa cariat) : Սուրբ Ագնեսի սրանչիւրն ալիսի կէսն է . միւս կէսն ալ արդէն գտնուած է : Պիտի ըսեն թէ Պիոս Թ. Սուրբ Պետրոսի աթոռն ելլելուն պէս հրաշքով բժշկուեցաւ լուսնոտութենէ , որով առաջ կտանջուէր : Ասիկա հաստատելն ամենագիւրին է : Գիտեմք , բաւական է բժշկական մէկ օրինաւոր խնդիր յարուցանել որպէսզի բժիշկներն իսկոյն երկու ներհակ կուսակցութեան բաժնուին և իրարու դէմ հաւասար զայրացմամբ կուռնին : »

« Շատ հեռացայ ես ցոյցէն , որոյ վերայ ձեզ կգրեմ . և որ պիտի ըլլար տէրութեան և մասնաւորաց տուներն Բանկալայի բոցերու , դազի կառուցներու , և Հռոմայեցոց խիստ սիրելի լսատներնրու ընդհանուր ճրագովառութեամբ : Իբրեւ անաչառ և ճշմարտասէր պատմիչ , պիտի յայտնեմ նախ թէ տօնն ամենախառաւոր էր : Հռոմայեցիք զարմանալի հանձար ունին թատերական աղբեցութիւն ընող զարգարանք պատրաստելուն մէջ : Գլխաւոր հրապարակաց վերայ յաղթական կամարներ կանգնեցին , հսկայ արձաններ , աշտաբակներ , սարաւոյթներ և այլն , ամենն իւղեալ քարտէզներով , դրուագներով , կոնկետով եւ բոժոժներով զարդարեալ : Հին յիշատակարաններն և աւերակներն , Տիբեր գետի եզերքն , հոյակապ աղբիւրներն կրակի ուրուական զննուներով լուսաւորուած էին : Մարտի բոլոր պատկերներն կերտներով , փունձերով , ասլաւզաղէտներով , սփռուցներով և հոյերով չըմարտաւեր էին : Այսօր ոչի գազն աչք կկտուէրներ , որոյ հոսմունքն հարկապատուութիւնն : Նուազուածաց ստուար գոմարներ այլ և այլ տեղեր կկաղային . վերջապէս , բազմաթիւ տուներ այլաբանական խորհրդանշաններով , կրօնական , քաղաքական և շղարհութեան արձանագիրներով պաճուեալ էին . . . այս ամենու , կրեն թէ , կամաւոր ընկերչակու-

թեամբ եղեր է . դժուարաւ կհաստատ թէ հոն քիչ մի ալ տէրութեանն ստակ ճապարղուած չըլլայ : Բայց և այնպէս ենթադրելով թէ տէրութիւնն չէ նստատեք , դարձեալ ամենեւին շատ չեմ զարմանար . ոստիկանութեան կամ ժողովրդապետութեան առջև դէշ համարուելու երկիւղն , որ մի և նոյն բան է , շատ լաւտեք վաւել տուերէր . և կառավարութեան թշնամեաց պատուհաններն ոչ սակաւ բազմազոյն լապտերներով ընցուն էին , որոց վերայ Մարտի անուան սիգնալիւրներն կտեսնուէին : Բայց յայտնան , գիտցուած է թէ Հռոմէական կղերն ինչ վարպետութեամբ իր ծուխէն ստակ կրաշէ , վերջապէս , ժամանակն շատ յաջող էր : Բոլոր ժողովուրդն խոտովանուրանի Գօղեանն օրատուաբար լուսնին կանցնէր . և քահանաներն կպատրաստուին ամեն ծուխի տուն երթալ և հաղորդութեան տոմսակներն հաւրել : »

Գ Ա Ն Մ Ա Ր Գ

Ապրիլի 19ի Դագրադեռն (լրագիր) Գլխիւնի ատման վերայ այսպէս կկսուի : « Գլխիւնի ամբողջ կորստեան լուրն բոլոր երկրին սաստիկ ցաւ սխտի պատճառէ : Անգլիոյ միջնորդութիւնն նորէն կորստական պտուղ բերաւ Դանմարգին : Եթէ խորհրդակցութիւնն Ապրիլի 12ին բացուէր՝ դիմադարն , Պրուսիացիք դեռ և ոչ մի յաջողութիւն ստացած չեղզիւզի մէջ , կրնար տեղի ունենալ : Սակայն խորհրդակցութիւնն ետ ձգուեցաւ , արանց գտնէ Դանմարգի հաճութիւնն հարցնելու . և մեր փառաշատագոյն թշնամին պիտի ներկայանայ խորհրդակցութեան տաճարին մէջ խորխտանօք եւ յաղթողի լիբացեալ պահանջներով : »

« Գլխիւնի կորուստն զարմանալի չէ . հարկ է , ընդհակառակն , զարմանալ թէ այն ամբողջութիւնն ինչպէս այսչափ երկար դիմացաւ : Եթէ Յրանսացիք կամ Ավստրիացիք ըլլային Գլխիւնի առջև , կարեւորութիւնն չկար Յ չարաթ թնդանօթով պատերազմիլ և յարձակումն պատրաստել զոր Գլխով արքայի փառաշէզ զօրքն ըրին , ումբերով և դնդերով երկիրն աւելին (ամբողջներն կործանելէն) յետոյ , և , վերջին վայրկեանն մէջ նոր օգնութիւն ստանալով : Գլխիւնի բուրգերն քարուքանդ և բրիչակ եղեր էին , թնդանօթներն՝ աւրուած , զօրքն՝ ոգեսպառ , և այլն : Դաներու սակաւաճեռն զօրաց քաջութիւնն և հաստատուութիւնն աւելի ևս զարմանալի են : Գլխիւնի նահանջն աղբին մէջ չալտի արթնցնէ արտամարկթ մտածութիւններ , ինչպէս արթնցուց Դանվերքի լրումն : Զօրքն , մինչև յետին շունչն , իր պարարն կատարեց . ժողովուրդն ալ իրենն պիտի կատարէ Ստուծոյ կամայն հպատակելով եւ արիանալով : Դանմարգի պատին զօրքի ձեռքն էր , զոր պահեց խիստ փորձութիւններու մէջ անցնելով , զորս պատմութիւնն յաւիտեան չալտի մոռնայ : »

« Յուսովի է թէ խորհրդակցութեան մէջ , կորովի դիմադրութիւնն , որ արեամբ Շեզվիզի հոգն ուղեց , յաղթութիւնն իրաւունքին տաց և ոչ ուժին : Այն ատեն , արիւնն , որուն արծեցաւ կռիւն , յուճակտո թափուած չըլլար , այլ կիրկէ հոյրենիքն , որ յիշէ պիտի պարծանօք և երախտադիտութեամբ իր քաջերն : »

— Ապրիլի 23ին Կոնկենհագէն կգրեն թէ . « Անհնարին է օտարականաց դադարտար ունենալ այն սուգի վերայ , որ կտիրէ մեր մայրաքաղաքին մէջ այն արխանսեղ կռիւնն յետոյ , որ վերջացաւ Պրուսիացի զօրաց Գլխիւնի առնելովն , որ մեր զինուորներն մաքաւեցան երեքսպառիկ և չորեքսպառիկ թշնամեաց դէմ : Այժմ մեր բոլոր առձեռն զօրքն կկրկուին Յիօնի կղզին , որ Յրեգերիկիայի ամրոցի դիմացն է : Աւելին ալ մեր նաւերն զօրք կրերեն հոն , այնպէս որ , քիչ օրէն Յուզլանդի և Յիօնի մէջ 30,000 զինուոր կարող եմք ունենալ , որ Պրուսիացիք զօրք հանելու փորձ ընելուեն հարկաւ : »

« Բրետիւն Թ. արքան մէկ նոր յայտարարութիւն հանեց , որով արժանաւայել և խիստ մեծ պատիւ կընծայէ Դաներու զօրաց Գլխիւնի մէջ ցցուցած քաջութեանն , զոր կհրաւիրէ յարաւունք իրենց հայրենասիրական ջերմեանդութեան և արիւնթեան մէջ : Երեկ թէ , հրաւրէն գեղեցիկ տաւաճութիւն ըրերէ մեր ազգային անվեհեր զօրաց աստիճանաւորներու և զինուորներու վերայ . և ամեն բան կցցնէ թէ Յուզլանդի առումն , զոր մարաջախտ Վրանգէլ իր մորին մէջ հաստատապէս դրերէ , առանց մեծամեծ զոհերու չալտի ըլլայ : »

« Մեր ճարտարագետ աստիճանաւորներն համոզուած են թէ , հարկ է որ , Ավստրիացիք եւ Պրուսիացիք կանոնաւորապէս պաշարեն Տրեդերիկա երեք կամ չորս ամիս որպէսզի կարենան անոր տիրել : »

« Յուզլանդի բնակչաց մեծագոյն մասն ամեն օր Դաներու կղզիներն կգաղթէ տանելով իրենց ստացուածքէն ինչ որ վրկելու ձեռնհաս է որպէսզի Պրուսիացեց և Ավստրիացեոյ ամեն տեսակ հարստահարութենէ և կեղեքմանէ ազատէ : Այժմ ինչ և պատահի , Յուզլանդ երկար ժամանակ ոգեսպառ և աւերակ մնալու է : » Կորստիտեղաւու հալաւ

ՀԻՒՍԻՍՍՅԻՆ ՍՄԵՐԻԿԱ

Ծօրեւստ հարաւային զօրավարի 5,000 հոգի հեծեալզօրն այրեց եւ կողպուեց Փալուգահ եւ Իւնիօն-Սիտի կենտուկի մէջ . ապա Բլօ ամրոցին վերայ յարձակեցաւ եւ յետս մղուեցաւ Հիւսիսայիններէն :

— Կըսուի թէ սարաւոյթ Դանն Մակ-Կըլլան և Տրիման զօրավարներն զինուորական սրաշտօնի կարգերէ : Սրկանտաի տաճանի վերայ եղած Հիւսիսայնոց բանակն դէպ Տրեստաի հիւսիսի կողմն չուեց : Չաւլտուն հասարակաւեւտականներու եւ ընկերաշատականերու մէջ արխանսեղ կռիւներ տեղի ունեցան . որոց դէմ բազմաթիւ զօրք խրկուեցան որբարեկարգութիւն հաստատեն :

— Հարաւայինը Ռաիկըան դեպին վերայ ունեցած իրենց դիրքն կամրայնեն :

— Դանն Մոնրոյէ բերդն գնաց որ Բըթլերսի հետ խորհրդակցէ :

— Հիւսիսային Սմերիկայի հասարակաւեւտութիւնն մինչև ցոյսօր լուծիւն կպահէր Մերսի կայի դարձուածներուն վերայ . և ոչ որ դիտէր թէ Տրանսայի միջամտութիւնն և նոր կայեւրու-

Թիւնն ընդունի տիտի Հիւսիսային Ամերիկա թէ ոչ : Այսինքն վաղնգտունի խորհրդարանն մէկ պաշտօնական յայտարարութիւն հանեց որով կծու նույնի թէ Մերսիկայի համարակազմութեան տնկումն և անոր տեղ կայանութեան կանոնումն չընդունիր, մանաւանդ եւրոպայի մէկ պետութեան ձեռք : Այս առաջին անգամն է, որ Հիւսիսային Ամերիկայի խորհրդարանն այսպէս հանդիսւ կայտնէ իր դիտումն Յրանապի միջա միութեան դէմ, որոյ սրտումն կրնայ սպառնալից արդիւնք բնեւաւ Մերսիկայի նոր միապետութեան դէմ : Այսինքն Հիւսիսի և Հարաւի մէջ շուտով խաղաղութիւն վերահաստատուէր, հարկ կըլլար անտարակոյր, այնչափ բազմաթիւ վարժ բանակներն և պատերազմի բաժան մթեր ներս այլ բանի պիտոյայնէլ : այն անուն Մերսիկայի նոր տէրութիւնն անուշտ ծանր վտանգի մէջ կկենար : Ստիպեալ իրոյ ընթացքն այսչափ մօտաւոր խաղաղութիւն չեն գուշակեր : ուստի Մերսիկայի նոր կայանութիւնն բաւական ժամանակ ունի ինքն զինքն ուժով յենելու, և ի ստիպել հարկին, զենքն զենքով վանելու նախապատրաստութիւն տեսնել : Այս ծանր պարագայ մեր ընթերցողայն ծանուցանելով հարկ կհա մարմնը յաւելուլ նաև թէ ձերանկոյտն որ բարե խտունից կարգաւորութիւն է, եւ ձգեց անվտանգութեան, այն յայտարարութեան վերայ վէճ յարուստն, ըսելի թէ չընդունեց զայն :

—Վաղնգտունէն հասած նոր բերքն կծանուցանեն թէ Յէղէրաներու դօրքն, երեք բանակի բաժնուած, Ռիչմոնդի վերայ կրպեն, այսինքն, Գոսն Ռալիսիւնի կողմէն, Սմիթ Թերակղզիի կողմէն, և Բոնրայի Հիւսիսային Վարդիի կողմէն :

ԹԻՒՐԻԱՅԻ ԵՒ ԱՅԼ ՏԵՐՈՒԹԵԱՆՆԵՐ

ՀԱՅԵՐՈՒ ՎԻՃԱԿՆ

[Տես թիւ 8]

Գիտեմ ես, գիտէ ամենայն աշխարհ որ Օսմանեան Պետութեան 1856 թուին Փարիսի ժողովի ատեն մեծամեծ յանձնառութիւններ ունեցաւ իր հպատակաց իրաւանց հաւատարմութեան մասին : և հազիւ թէ անոնց չորսող մասն տուած այժմ կհաւատեն, թէ անոր ալ արդիւնքն տկարայնել կըլլաւ : Ահա ասոր ապացոյցն է : Երբ Հայն իր զլխաւորաց դատաւարութիւն անհաղութեամբն տգիւտութեան իրաւարին մէջ կթարթալէր, ինչպէս երբեմն Նիսպօլեցիք, և իր առ ազգն, առ կրօնն և առ պաշտօնն տէրութիւնն ունեցած պարտականութիւնն ոչ գիտէր, ոչ ալ կրատարէր, Հայոյ ընտիր, արթուն և հաւատարիմ մասն ցանկացաւ ընտիր հովիւներ պատրաստել որպէսզի ժողովրդեան բարոյական կեանքն արթնցունէ : Օսմանեան կառավարութեան արդեւեալ բարիքն ժողովրդեան ճաշակել տայ և Թիւրքիայի Հայուն նախանձելի չընէ Ռուսիոյ կամ Պարսկաստանի Հայու վիճակն : Երբ որ Նախախնամութիւնն յարոյց խորըմեանի նման անձնանուէր հալիւ, որ Տէրութեան և ազգի օգուտներն հաւատարմացէս կբարոյցէ, կհաւատեն որ, Տէրութեան բաղաքա

կանութիւնն զնա կհալածէ : ասոր ներհակ, երբ որ ազգային վարչութիւնն իր վեհապալար կզերի չար ներդրութիւնն խորտակել կշանայ, Օսմանեան Տէրութիւնն դանոնք անկունէ ազատելու համար իր զինեալ բազմակն կերեցունէ, որոյ օրինակն տեսնուեցաւ Տիգրանեան Մկրտիչ վարդապետի զէպրին մէջ : Յիշեալ անձն Քիւրդիստանի Հայոց մտաւոր մշակութեան պատրուակաւ Պօլսի Հալիքէն, կհաւատեն թէ, 200,000 դուռուչ դրամ հաւրեց (1) : Ազգն տեսնելով անոր ներքութիւնն արժան դատեցաւ անորմէ հաշիւ պահանջել : սակայն նա Տէրութեան Պաշտօնից դիմելով հաշուառութեան ալ ազատեցաւ, դատէ ալ ազատեցաւ : Այսինքն իրողութիւնն ստորէ է, այն ունեւե բանի՞ կարծէն Սահմանադրութիւնն, պարտիրաքի եւ ազգային իրաւունքն : Ո՞ր տեսնուած է, երբ լուծած է որ համարակութեան օգուտն համար նուիրեալ դուռնարի տուողներն իրաւունք չունենան նոյն դուռնարի մատակարարութեան հաշիւն պահանջել : և թէ Տէրութիւնն որ սկզբանց, որ օրինաց զօրութեամբ այսպիսի պարզ ազգային դրօժի մէջ կմտուի և իր վաւերացուցեալ Սահմանադրութիւնն ինքնին ապիկար կընէ : Կարծեալ, մինչդեռ Կայսերական Կառավարութիւնն նոյն Սահմանադրութեան գործադրութեան համար դատաւորներ պատուէր կըլարէ, Կարսի գայմակամն ինչ իրաւամբ, հակառակ Բ. Գ. պատուէրին նոյն բաղրի Հայոց անաշնորդի հոգեւոր իրաւասութիւնն միայն կընդունի և քաղաքական կմերժէ : Կրնայ մէկ ստորադրեալ իր մեծաւորի սուրին դէմ արացել, եթէ նոյն մեծաւորն անոր ծայրն բնացուցած չըլլայ : ապա թէ ոչ, ինչո՞ւ չպատժեր իր խեղ պաշտօնեան ի շինութիւն հաւարակութեան եւ ի խրատ անոր պաշտօնակցայ :

Մեր յօդուածի միակ նպատակն է Օսմանեան Պետութեան և Կալմանեան Հայոց իրական շահ : Օսմանեան Պետութիւնն 1829 թուին Երզրումի, Կարսի և Բայազետի գաւառներէն 90,000 Հայ կորսնցուց եւ 16 միլիոն Փրանդ ալ տարեկան եկամուտ : կորսնցուց նաև 6,000 ի չափ Յոյն եւ հոմէական Հայ բնակիչներ, որք գնացին իրենց երկրագործութեամբն եւ ձեռաց ճարտարութեամբն Անդրկովկաս ծաղկեցնել, զոր և ծաղկեցուցին : Յոյն վտանգն այսօր ալ, վաղն ալ և միշտ սպառնաց պիտի Օսմանեան Պետութեան քանի որ խախտ կընէ իր ժողովրդեան մէջ եւ իր հպատակաց կատարեալ հաւատարմութիւն չէ տուեր : Վասնզի հոն է, միայն հոն է Օսմանեան Պետութեան առաջաց բարդաւանդանոց խաբիսն : Ի՞նչ օգուտ եթէ Պօլսի մէջ բանի մի հանձնարել Հայեր այս ինչ, այն ինչ պաշտօնի համեն : քանի որ մէկը մէկ չեմքն անցնելուն պէս, իրենց դատն կկորսնեն : վասնզի հպատակաց վիսլայիսն եւ երդումն անվաւեր են : մի թէ այս թիւը սկզբանց վարդապետութեամբ ինքնին Տէրութիւնն իր հպատակ ազգաց կապիւժի եւ անհատաւորութեան դուռ չբանար : Ի՞նչ օգուտ Օսմանեան Պետութեան եթէ թիւրքիական Հայաստանն Հայ

(1) Հասարակաց հաշիւաւն շարժուալ 500 ին վերէն ալ մեք ընձայեցիք որ անոր ձեռակա Քիւրդիստանի մեր չքաւոր երբայց ճիշտ յաշիւաւ, որոց հաշիւն կրարարակաւ կպահանջենք :

տարրէ պարսկուի և Ռուսիական Հայաստանն Հայ տարրով խճողի : մի թէ հետեւանքն աւելի ծանր չախալ ըլլան : Մի թէ Օսմանեան Կայսերութեան սպառազին շահաւոր է երբ Արիաշայի (Սխուրեան) անդին Հայու դործունէութեան առջև բացուած ըլլայ ընդարձակ առաքել, ուր անխախտ դիմուարական, քաղաքական, ծովային, իրաւաբանական և այլ պաշտամանց մէջ մտնելով, իր հանձնարին եւ առաքինութեանց համարիտ վարձքն ստանալով, պէտք եղած ատեն, իր արիւնն անգամ նոյն տէրութեան պաշտպանութեան եւ բարգաւաճանաց համար կթափէ : Իսկ Արիաշայի ազգի Հայն հպատակութեան, խտրակրօնութեան եւ հարստահարութեան տակ ծնուած միշտ իր Անդրախուրեան եղբոր վիճակին կցանկաց հասնել : Ի՞նչ քննա կընէր Օսմանեան Պետութիւնն եթէ Բէհրուդեան, Երկայնաբաղրի Սիդութեան և Մատաթեան Հայ գորավարաց պէս, իր բանակներու մէջ ալ, բանի մի Հայ գորավար ունենար, և Սերբերական և Լագարեան Հայ ծովակալներուն պէս, իր նաւուց մէջ ալ, բանի մի Հայ ծովակալ տեսնար : Ունենալ և չունենալ իր ձեռքն է : սակայն մեր, ըստ որում Թիւրքիա կարեմը, և Թիւրքիայի վերաձնութեանն, բարեկարգութեանն եւ զարգացմանն յամենայն սրտէ, յամենայն մտաց եւ յամենայն հոգեց փափագող եմք, վասնզի համոզուած եմք որ Թիւրքիայի ընդհանուր լաւութեանն մեր երեք միլիոն Թիւրքիաբնակ հայրենակիցներն ալ կրնան մասնակից ըլլալ : ուստի կցանկամք որ այս այսպէս ըլլայ : Կցանկամք որ Թիւրքիոյ կառավարութիւնն ջանայ և ի գործ դնէ ամեն օրինաւոր միջոց Հայոց մէջ միակրօնութիւն պահել, այն է Ռուսաւորչեան հաւատք : քանզի ինքնին արդէն բանի մի անգամ պատերազմայի (պաշտպանութեան) դառն ճաշակն աւերէ : Բանզի Հայն Ռուսաւորչեան մնալով միշտ Օսմանեան Պետութեան յարեալ կրնայ, իսկ իր կրօնքն փոխելով՝ դուռէն պաշտպանութիւն վնասել կսկսի : Կցանկամք վերջապէս, որ Օսմանեան Կառավարութիւնն Պատրիարքի փոփոխութեան նուաասացուցիչ տուրքն վերցնելէն զատ ազգային տեսչութեանց ալ, ազգային առեւնից ալ ձեռնառու ըլլայ յիշելով որ Ախուրեանի անդին Ռուսիայի Կառավարութիւնն Սուրբ Էջմիածնի Սինդի բոլոր ծանրն իր գանձէն կվճարէ : և տարին 26,000 ֆ. կվճարէ եւ բոլոր Սինդի, Թէմակալ Առաջնորդաց և Հոգեւոր Ստեփնի միլիոն նաւակներն, մատաններն իր փոստայով ճրի կտանէ և կրեթ : Վերջապէս, կցանկամք, որ Օսմանեան Հայն իր դրացի պարսկական եւ ռուսական երկարոց համեմատութեամբ, աւելի բարոյական, նիւթական և բաղաքական բարոյութիւն վայելէր, իր հոգին վերայ հաստատ կենար և երախտագէտ առ իր պաշտպան տէրութիւնն ըլլար : քանզի բարեբարութիւնն միշտ շնորհաւոր տուութիւն կծնանի : Իսկ անխառնութիւնն պարտուց մօռացումն, որով քայքայուեր են և կքայքայուին ամեն մարդկային ընկերութիւնք : Վերջապէս, մեր ոճն կրնայ խիստ երեւի, մեր գրիչն կրնայ անբաղաքավոր համարուիլ, կընդունիմ, մանաւանդ եթէ անոնք պատառարոյժ մատնիչներու միջոցաւ թիւրքերէնի թարգմանուին : սակայն մեր ջերմ մաղթանքն ընդհանուր Թիւրքիոյ և անոր Հայոց բարեկրօնութեան և զարգացման համար այժմ և միշտ անխոփութեւի պիտի մնան :

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա . Կ Ա Ն

[Տես սխ 7 և 8]

Վասն զի հասնողսն եմք թէ մեր լրագիրներն կրատարարս նորամուտ խանգարմանց արձագանք ըլլալուն տեղ , պարտական էին , ընդհատակն , նոյն խանգարմանց դէմ զօրեղ թուով կանգնել և լեզուի մարտութեան վերայ ներգործել , որ այլ աղբայրն բարեկարգութեանց համեմատութեամբ , ոչ սակաւ կարևոր է և շահեկան . վասն զի լեզուի յոռավազիմութիւնն եղծմունքով չըլլար : Այսու ա- մենայն ճշմարտութիւնն կհարկադրէ մեզ յան- ցանքն բողբոլին Պօլսի վերայ չնետել . այլ բուն չարագործն խնդրել , գտնել , դատի կոչել և դա- տապարտել : Պօլսոյ Պատուելի Հասարակու- թեան մեզնն թեթեմալով՝ այնուհետև դիւրա- հաւանութեամբ , մեղիարար և առանց ամենեւին ընտրութեան եւ կշռադատութեան բուն յան- ցաւորի չար օրինակին կապկորէն հետև ին կըլլայ :

Որչափ որ մեզ կարելի եղաւ հետազօտել , մեր տեսանք որ մեր ամեն հին և նոր մատենագիրներն մինչև անցեալ դարու վերջն , մեր լեզուի բուն ողբոյն հաւատարիմ մնալով՝ մեր նախնեաց ուղ- զագրութեան հետեւեցան , ընդ որս և Վ . Հ . Մ . Չամչեան , բազմաթիւն Մխիթարեանն : Նորերէն ալ Գեղարարցի Ներսիսեանն իր Նումա Պոմպի- լիոսի թարգմանութեան մէջ : Մերորեան լեզուի որբաղծութեան , եթէ ոչ առաջին , գէթ ծանրա- դոյն յանցանքն կմնայ Հայր Յարութիւն Ագե- րեանի վերայ : Այս մատենագիրս , որոյ Լեհաստան բնակեալ ցեղարանութեան մէջ թերեւս բանի մի դիւզին Լէհի , Հունգարացիի , Սլաւոնի և Տրանսիլ- վանցիի տարերք կան , և որոյ երակներու մէջ հոսած արեան գոնէ կէսն այրագի արիւն է , որ չգիտեմ , ինչ տարբեր հօրէ և մօրէ ծնած , ինչ խոռնածին դայեկի կաթ ծծած և ինչ օտար ծառայից ձեռք մեծցած , թէև Վէնետիի Գիտ- նական Մխարանութեանն աշակերտեցաւ եւ ան- դամ եղաւ . սակայն իր հանահոյսն ամենեւեմ (խաղաղութիւն ամենեւեմ) երբէք չմոռցաւ : Թէև խիստ ծաղրելի էր , եթէ տասնեւիններորդ դարու գրագէտներէն մէկն ինքն զինքն Մերորէն , Սահակ Պարթևէն , խորենայիէն և Եղիշէն աւելի հայկարան և յունագէտ երեակայէր . ա- կայն մեր Լէհաստանի Փաւլսն չզանգիտեց բնու զինքն նոր Մերորէ ոմն կարծել և հին Մերորայ ճշմարտութիւններն վրիպակ համարելով՝ իր վրի- պակներն անոր ճշմարտութեանցն փոխանակել : Նա իր խոտոր լեզուագիտական աղանդն հայ մանկ- տիին և դպրոցներուն մէջ մեղմով տարածելու համար գործիք ընտրեց իրեն իր չարախտաւատ անգղիերէն-հայերէն , հայերէն-անգղիերէն եւ գաղղիերէն-հայերէն բառգիրքներն : Զարմանալին այն է , որ 1821 թուին ի վեր հայ վարժապետ- ներէն և դիտնականներէն և ոչ մէկն , իրեն պարտք համարեց այսպիսի լեզուապղծութեան դէմ բող- բել և հայկաբանութեան իրաւունքն պաշտպանել : Եւ այս իսկ է պատճառն , որ 40ամեայ վրիպակն 1,400ամեայ ճշմարտութիւնն դաժալէժ ընկելով , այսօր Պօլսի և Իլդիրի նոր սերնդեան ուղեղին մէջ իրրեւ հարադատ հայկաբանութիւն այնպէս խոր թափանցեց է , մինչև , արմատախիլ ընելու համար ոչ բաղում ձգանց պէտք են :

Նա առաջին եղաւ , ըստ իմ գիտելոյ , որ Լե- հա-Մաճառա-Գերմանա-Բահմա-Խոռաթա-հայ արտասանութեամբ Անգլիացոյ B' Պի հնչեց , D' Տի , K' ԲիՅ , F' Փի , T' Դի , ստացաւ եւ

հայերէն Բ' pien, Գ' C, CK, g Դ' T, (soft), Թ' T (hard), Կ' G (hard), Պ' B, S' D, Բ' K: Մի և նոյն մօլորութեան հոգիէն զրդեալ հնչեց նաեւ գաղղիերէն B' ՊԸ, Ը' Բ, D' ՏԸ, G' Կ, P' ՓԸ, T' ԴԸ : Հայր Ագեբեանի նորածնութեանն հետեւեցան եւ այլ թեթեմալ գրիչներ , որոց խեղատարակն բառգիրք չինելու տենդով բո- րբուրած էին :

Հայր Ագեբեանի նորամոյժ տառադարձու- թեան հակառակորդներն չէին կրնար այնպէս խայտառակել զինքն , որպէս ինքն զինքն իր բառագրոյ վերջն դրած յատուկ անուանց ցուցակովն խայտառակեց . իբր զի իր բոլոր բա- զրբի մէջ B' ՊԸ գրել և հնչելն յետոյ , յատուկ անուանց մէջ կգրէ և հնչէ Barnabé' Բառնաբաս , Barthelemi' Բարթուղիմէոս , Basile' Բարսեղ , Benjamin' Բենիամին , Bernard' Բեռնարդոս , Berthe- Բերթա , Bibiane' Բիբիանէ . սոյնպէս , C' Բ փոխելն և հնչելն յետոյ՝ յատուկ անուանց մէջ զայն կենի կդարձունէ , օրինակի համար . Cajé' Կայիոս , Calliste' Կալիստոս , Calvin' Կալվին , Caroline' Կարոլինէ , Cassandre' Կասանդր , Claude' Կլոդիոս , Constans' Կոստանդ (տ) , Corneille' Կորնելիոս , Croesus' Կրեսոս , Cyprien' Կիպրիա- նոս , Cyriaque' Կիրակոս , Cyrille' Կիրիլ , նոյն- պէս D' ՏԸ գրելն եւ հնչելն յետոյ՝ յատուկ անուանց մէջ զայն դայի կփոխէ , զոր օրինակ . Daniel' Դանիէլ , Denys' Դիոնիսիոս , Damien' Դամիանոս , Damase' Դամասոս , Dominique' Դոմինիկոս , Dagobert' Դագոբերտոս . և այլն . այսպէս եւ G' ԿԵՆԻ փոխելն յետոյ՝ յատուկ անուանց մէջ գիմի կփոխէ , որպէս , Gabriel' Գաբ- րիէլ , Gaspard' Գասպար , Germain' Գերմանոս , Gregoire' Գրիգոր , Guillaume' Գուլիէլմոս , Gui' Գուլիմոս . այսպէս Ի' Դը գրել և հնչելն յետոյ՝ յատուկ անուանց մէջ պէի կփոխէ . օրինակի համար . Pallas' Պալլաս , Pamphele' Պամփիլիոս , Patrice' Պատրիկիոս , Paul' Պօլոս , Pie' Պիոս . Pierre' Պետրոս , Paulycarpe' Պօլիկարպոս , Pom- pée' Պոմպէոս , Pontius' Պոնտիոս . Procope' Պրոկոպիոս . Proserpine' Պրոսերպինոս . այսպէս և T' ԴԸ գրելն և հնչելն յետոյ՝ յատուկ անուանց մէջ տիւն կգրէ և հնչէ , օրինակի աղաքաւ . Tancrede' Տանկրէդէս , Timothée' Տիմոթէոս , Tite' Տիտոս , Titien' Տիտիանոս , Tobie' Տովբիոս , Triton' Տրիտոն , և այլն :

Պիտի շարունակուի

Կ Ա Ն Ա Ս Ի Ր Բ Ե Ւ Բ Ա Ն Ա Վ Ր Ա Ն Բ

[Տես սխ 7 և 8]

Այնպէս անկարելի և անհաւատալի կերեւէր մեզ իննեւտասներորդ դարուն մէջ այսպիսի անըւր յանդգնութիւն : Մեր Աւետարան , Կանոնգիրք և Աստուածաբանութիւն մեր սեղանի վերայ դնելով և յիշեալ բանադրանաց թուղթն անոնց հետ համե- մատելով , և այս վերջինն առաջնոց ժխտումն եւ թշնամանք համարելով , չզանդաղեցանք եւ ոչ մէկ վայրկեան , մեր բարեկամին պատասխանել թէ « յիշեալ բանադրանքն գորով հակառակ Աւետա- րանի , Կանոնագրոյ և Սուրբ Սինդի կոչեցիական կարգին , ոչ ինչ է : » Այսպիսի որ այն տոտն չյուսելի գրել նաեւ թէ « յիշեալ անիժագիրն արժա- նի էր այդն Կապիարայի հրապարակաց մէկուն վերայ դրածն ձեռնար իւնիստիկոս գրողին : » Որպէս զի ամեն մարդ խմանայոր Հայաստանեայց Մի Սուրբ , Կաթողիկէ և Առաքելական եկեղեցին սրբաւէր

է , ազատասէր է եւ բռնութիւն չընդունիր . եւ թէ եթէ բռնարարողն Կաթողիկոս , Պատրիարք , Եպիսկոպոս , Ամիրայ եւ ով եւ իցէ ըլլայ , մեր ե- կեղեցին չզանգիտեց զնա դաժալէժ եւ , ինչպէս ի սկզբանէ անտի դաժալէժ ըրերէ ամեն բռնասէր Կաթողիկոս , Պատրիարք եւ Եպիսկոպոս : Մեր դատումն , որչափ ալ ուղիղ և Աւետարանի և Կա- նոնագրոյ համաձայն ըլլար , այսու ամենայնիւ փոփոխուին տխուրանքէ և մեծաճամբաւ աթոռէ հետի դողով , հաւանական էր , որ աղբեցութիւն չընէր Բէկնադարեան Եպիսկոպոսի և իր կուսակ- ցաց վերայ : Սակայն բարեբախտաբար Տէր Մատթէոս Կաթողիկոսն ևս , երեք ամիս յետոյ , մեր դատումն վերաներեց , Մայիսի 24 և 25ին կոնդակներ գրելով յիշեալ Աագ Բահանային և Պատուելի Ագային Հասարակութեանն Կալ- կաթայի , և յիշեալ անիժագիրն անդիւ և անտեղի վճռելով՝ կպատուիրէ անմեղ բանադրեցին իր բահա- նայագործութիւնն ըստ՝ առաջնոց շարունակել . և վախճան կտայ այսպէս երկամեայ շփոթմանցն , զորս յուզերէր Կաթողիկոսի մեր եղբայր մէջ յան- դուրն և օրինաւանց Բէկնադարեանցի ամենաբաժա- կութիւնն :

Ապրիլն , ըստ որում , Ամենապատիւ Տէր Մատթէոս Կաթողիկոսն յիշեալ Աագ Բահա- նայի անմեղութիւնն ճանաչելով Բէկնադարեան Արհայ խժական կապանքն արձակեց , թէպէտ և ըստ եկեղեցւոյ այն կապանքն , իբրեւ օրինազան- ցութիւն , ոչ ինչ էր եւ ոչ ինչ ալ համարուէր պիտի . սակայն ամեն ժողովուրդ Կանոնագրոյ , Աւետարանի և Աստուածաբանութեան զուգաւա- տար հիմունքին չունի որպէս զի զուգաւատար ալ դատի : Կմնայ մեզ արդ մէկ զխոտորութիւն մեր Հնդկաստանի Պատուելի ագային Մխարանու- թեանն ուղղելով մեր յօդուածն կնքել :

Մեր Ռուսոյ , Պարսից եւ Թուրքաց Հայաստանի բաժիններն երկար ճանապարհորդեցին , ոչ թէ իրեն նուիրակ կամ ժողովարար . այլ մեր ժող- վրդեան արդի կեցութիւնն բնեւելու և անոր մի- ճակին հմտանալու դիտաւորութեամբ : Թէև մեր ազգի բարոյական խորխոսն պատուական է և անոր մտաւոր անդաւատանն՝ պարարտ . սակայն բարի և ձեռնհաս դատաւարակաց երաշտու- թեան աղաքաւ , ամենայն բարեմասնութիւնը հոն ցրտահար եղեր են և թմրութեան մէջ կան : Գաստիարակաց երաշտութեանն աւելի է արժա- նաւոր հովուաց երաշտութիւնն . վասն որոյ Լու- սաւորչի դատարանն ստիպուելու են օտար աղբուր- ներէ իրենց ծարաւն լեցնել , որ դժբախտաբար միշտ զովարար չէ , ոչ ալ առողջարար : Կաթողի- կոս , Պատրիարք եւ Առաջնորդ մինչև յայսօր արժանաւոր եկեղեցականաց պէտքն զգալով ապրեցան եւ մեռան . տակաւին այնպիսի մէկն չերեցաւ որ սրտի մտօք և անկեղծութեամբ խորհր- թէ իր ամենադեղագոյն պարտաւորութիւնն է , իր միակ պաշտօնն է Բարխտոսի դիմորեալ եկե- ղեցւոյ համար կիրթ զինուոր պատրաստել եւ Սուրբ Լուսաւորչի հօտն խարբայ եւ չըմօղիկ փաթեթներու և վարձկան բողբոյսականներու որո- ճայթներէն աղատել : Աստուած ալ գիտէ , Սուրբերն ալ գիտեն , մեռեալը և կենդանիը գիտեն , որ փա- թեցւոյ և բողբոյսական միաթմարք , գոնէ Թիւրքիոյ նկատմամբ , ամենն ալ խարբայ են և փարիսեցի- վասնդի , իրենք զիրենք Աւետարանի բարոյգէ- ղ ուղղախառութեան վարդապետ սղանձացունելով , Աւետարանի և ուղղախառութեան ներհակ կ'ըլլար :

ուին, վասնորով ո՞վ տեսաւ, ո՞վ լսեց, ե՞րբ խմացուեցաւ որ մէկ Լազարիստ, մէկ Յիսուսեան, մէկ Երեմիայան Կոստանտնուպոլիս կամ այլուր բերան բանար և մէկ Թուրքի, մէկ Առնաուտի, մէկ Դուրդի, մէկ Քիւրդի կամ մէկ Եղիլի Քրիստոսի անունն բարոյէր կամ թէ Քրիստոս բարոյէրու համար բանդի, դանի, հարած անայ, նախատանայ, կոպանայ փառքին արժանանար . ոչ ոք . ոչ ոք : Այլ աներես շանաճանճերու նման, քրիստոնեայ և ամենապարկեշտ քրիստոնեայ Հայոց տուններն մտնելէ, էրկան և կնկան մէջ տարաձայնութիւն ձգելէ, ընտանեայ մէջ շփոթ արծարծելէ, եղբայր մէջ քսութիւն ընելէ, ազնիւ և տղայ պաշտպան աս դիւ, ան դին խրկելէ զատ, տակաւին այլ առաքինութիւն չտեսնուեցաւ այս միջոցաւ առաքեալներուս վերայ . մեք ալ իրաւամբ կրնամք ըսել . «ի սրտոյ նոցա ծանխիջիք զնոսա :

Արդ ոչ միայն Հնդկաստանի Ազգայնոց կրաւորներն այլ և ամեն Հայոց, ուր ուրեք որ կան . թէ եթէ արժանաւոր, զխոնական եւ անձնազիր հովիւ ունիր, պիտի բռնեցէր զնա, ոչ ոսկոյ ծանրութեան հետ փոխեցէր, ոչ անդամանդի մեծութեան հետ և ոչ մէկ կամ տասն և մէկ օտարական առաջնորդաց հետ, որք ժողովրդեան բարիքն վայելեն մեծ ծառայութիւն սեպելով, որք ժողովրդեան պիտոյլն և ոչ գէթ ճկոյթիլ օգնելով, փախուկ անկողնոյ մէջ պարկեղով, պատուական կտոր նստելով, ի սէր ազգին խորոված հաւ և գառն ճաշակելով, ընտիր բեհեզ կերպաս և աղբեւեռնի հողմելով և այլն, և այլն և այլն, տակաւին զիրենք վշտալի կանուանեն : Եթէ այսպէս է, ուրեմն Խըրըմեան ամենազովերի ՄԻՐՏԻՉ Վարդապետն (զոր ոչ տեսերեմք, ոչ կճանաչեմք, և ոչ թղթակցութիւն ունիմք անոր հետ), որ Հայաստան լուսաւորելուն զոհերէ իր հանդիսան և վայելչութիւնն, որ բազդի, ծաքալի, մերկութեան, նախատանայ, մատուցութեան, զրպարտանայ և մինչև մահուան փորձի տանելով՝ Վարդապետ և Մշտ վանքերն տալարան բացերէ, ուսումնարան հաստատութիւն, բաւական բարեկարգութիւն արմատացուցերէ, Աստուծոյ տունն գողերէ սրբերէ, և որ երկու տարին մէկ անգամ քաջկատուելով Պօլիս դատի կոչուելէն դեռ չէ աղատեր, ուրեմն, կրնամ Խըրըմեան Վարդապետն երջանիկ ըլլալու է : Այո, արգարե Խըրըմեան Վարդապետն երջանիկ է . վասնորով չկայ այլ մեծ երջանկութիւն բան կորացր հաւար կոչվր չլրարէն : Խըրըմեանն, ինչ և կուրայ եւ բոլայ Մէճմուան, Տարծոն և Վասպուրականի երկրորդ Մեսրոբն է, Խըրըմեանն բոլոր Թուրքաստանի մէջ եզական և մէկ հատիկ վարդապետ է, որ իր կոչման վստմութիւնն հասկնալով, ի կշիռ դրերէ անոր իր անձնանգամ : Գարծիւ, եղբայր՝ դարձիւր, աղանիւղ խաղաղութեան դարձիւր, հրեշտակդ մտիթարութեան վերտոլին չայաստան եւ մշակէ մեր հայրենակցաց կորոյսեալ . այլ բերրի մտաց անդամտանն : Եթէ արդի կէսկէս Հայն, եթէ արդի կնամարդի Հայն քոյ արժէքն չճանաչէ և աշտուճ հայիդ պատանն բեզ արտաբերով համեմեալ կերպունէ . սակայն ամեն հարազատ Հայոց ուխտն և մաղթանքն ուղեկից են բեզ : Եթէ չվհատիս և ընտրած սասարկեզ ի զուրի տանեն՝ հաւատալի եղիր, որ իննեւտաններորդ դարու ամենազովերի Հայերէն մէկն կըլլաս . վասնորով արդէն քոյ ազգաբարեկան անգիւտ նահատակութեանց լուրն 6,000 միլ հեռի տարածուելով,

իրբե կնդրիկ անուշահոտութիւն, ամեն ճշմարիտ Հայու բիւրն կողարձացնէ : Մեսրոբայ, Սահակայ և Ներսիսի հոգիքն բեզ առաջնորդ եւ հովանի ըլլան :

Այսպէս և ձեզ կըսեմ, « Պատուելի Ազգայինք Կալկաթայի՝ ամուր ձեռք բռնեցէք ձեր Աւագ երէցն, որ ձեր վանքի բարեկարգութեան և անոր եկամուտն յուճալտու վատնելէ ազատելու եւ ձեր իրաւունքն պաշտպանելու համար յանձն էաւ կամ մու նախատինք, վիշտ, հարածանք և նոյրբ . ամուր բռնեցէք ձեր Աւագ երէցն, որ 18 տարի առանց ինչ տարաձայնութեան, ամբամբաւ, առանց ինչ արատոյ ձեր հօտն հովուեց եւ մեր ժամանակի կրօնախոխութեան ժանտախտէն ազատ պահեց զձեզ : Փոյթ չէ թէ ձեր առաջնորդն այսօր Թաղդէոս կըսուէր և վաղիւն՝ Մովսէս . առանց փորձելու մի ումեք հաւատացէք : Արարէք և դուք զայն, ինչ որ կընեն այսօր Ղաւրարդի ազգայիններն . որոշեցէք ձեր Առաջնորդին վայելչութիւն թոշակ եւ Ամենաիրկչեան Վանքի բոլորն եկամուտն յանձնեցէք մէկ ընտրեալ ժողովի ձեռք, որպէսզի առաջնորդի ապրուստն հոգալէն զինի, մնացեալ եկամուտն զուր վատնուեալուն տեղ՝ որոց, սյրեաց, դաւանելոց, հիւանդաց, նա մանաւանդ աղջկանց եւ տղոց վարժարանաց համար ծախուի . քանզի այսպէս է նաեւ բոլոր Ռուսաստանի Հայոց օրէնքն, ուր ամեն առաջնորդը ամսական թոշակ միայն ստանալով վիճակի եկամուտներէն, մնացորդն ազգի պիտոյլն նուիրեալ է :

Քանի մի այսպիսի անիծաղիր ալ մեզ Կոստանտնուպոլէն խրկուեցան մօտեւս հրատարակելու համար, որովք Սրմաչի վանականներէն մէկն քանի մի հարիւր զուռուչ փոխ տուած գօլով մէկ Հայու, յիշեալ վանականն կարսառայ բանադրել զանգաղ փախուտն եթէ ժամանակին իր գումարն չհատուցանէ, որպէս թէ իրենց երկրին մէջ դատ և դատաւոր չըլլային բնաւ : Երկրագործն եկեղեցւոյ և եկեղեցականաց պաշտպանութեան համար և ոչ թէ զանոնք դատելու և առտելու համար հաստատուած է : Ուստի Երկրագործն կյուսայ թէ Նորին Բարձր Սրբազնութիւն, Ստեփաննոս Առք Եպիսկոպոս, Նախկին Պատրիարքական տեղապահ և Իգնիմիտի Թէմակալ Առաջնորդն զսպէ պիտի ըստ արժանոյն Կարապետ անուն վանականն, և ազգի վանքն բանք կամ բուրս ընելուն տեղ ի գալթակալութիւն ճշմարիտ Հայոց և յուրախութիւն Յիսուսեան Հայոց, զանիկա Հայոց կրթութեան վարժարան ընէ : Ապա թէ ոչ՝ չորս նամակն ալ կհրատարակեմք և չեմք դանդաղիր բնաւ կարեւոր մեկնութիւն տալ ի զիտութիւն ամենեւցուն :

ԾԱՆՈՒՅՄՈՒՔ

— Կրթութիւն հայերէն քերականութեան, յորինեալ Ա. Մ. Վ. Գարազաշեան, տպեալ ի Կոստանտնուպոլիս յամի 1864, ծախուք Պէշկիթաշու Հայկազեան Ընկերութեան :
— Բովանդակութիւն եղանակայ Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ ըստ ութն ձայնից, արտրեալ Ե. Մ. Ազալի Տնտեսեան և տպեալ ի 1864 ամի ի Կոստանտնուպոլիս :

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Խանութեան մը տեսնելով որ իր յաճախորդը ծախու առած գուլպային ստակը չի վճարած կերթար կոր . բաղադրաբարութեամբ կըսէ . «միտքեքնիդ պահեցէք, պարոն՝ եթէ քսակնիդ կորսնցունէք, հոս մօռցած չէք ըլլար, քանզի հոս քսակնիդ ծոցեքնէք երբէք չի հանեցիր .» — Կը վճարուի :

Մայր . « ա՛ռ սա կարկանդակը, Յովսէփ՝ պատուաւոր կերպիւ երկուքի բաժնէ՝ կէսը եղբօրդ տո՛ւր . Յովսէփ . « մայր իմ՝ պատուաւոր ի՞նչ ըսել է՝՝ մայր . « այսինքն մեծ կտորը եղբօրդ տո՛ւր .» Յովսէփ . անանկ է նէ, մայր իմ՝ եղբայրս թո՛ղ բաժնէ :

Ամբիկայի միացեալ նախագաց լրագիր մը կըսէ . «պատկերհան մը անանկ քնական նմանութեամբ արծիւ մը գծադրեց, որ օրը երկու հաւկիթ կածէ :

Անցեալ գիշեր չորս հոգի թողթ խաղալու նստան . պարոն մը հարցոց իր զիմաւի օրիորդին . « Սօփիցայ՝ դո՛ւ ես իմ ընկերս՝ . « այո՛, եթէ կուգեա՛ մինչ ի մահ՝՝ կը պատասխանէ աղջկիդ ցած ձայնով :

Բանքառակ մարդ մը իր աղջկանը կըսէ . « հատա՛տ միտքդ դիր, փրեյի աղջկի՛» որ աղքատ մարդու հետ չամենանաս . բայց սա ալ յիշէ՝ որ ամենէն աղքատ մարդը ան է, որ ստակէ զատ ուրիշ բան չունի :

« Պարոն փատարան՝ տղաս քովդ ծառայութեան կանոնաւրաս կին մը . — « քանի՞ տարեկան է՝՝ հարցոց փատարանը . — « Եօթը՝՝ ըսաւ կինը : « Հատ սղտիկ է, չի կրնար սորվիլ . ասկէց մեծ տղայ չ՞ունի .» կըսէ փատարանը . « այո՛, քանի մը հատ ունիմ . բայց մենք կը կարծենք թէ ասիկայ շատ յարմար է փաւտաբան ըլլալու՝՝ կըսէ կինը . ինչո՞ւ համար կըկարծէք որ ասիկայ յարմար է՝՝ կը հարցունէ փատարանը . — « որովհետեւ, կըսէ կինը, երբոր աս հինգ տարեկան էր . աստանայի պէս սուտ կըլեւտէր . երբոր վեց տարեկան եղաւ, յետին աստիճան քաւ և խորամանկ էր . և քանի որ հիմակ Եօթ տարեկան է, ինչ որ պատահի՛ կը գողնայ :

Անցեալ օր ծառանուս հարցոցին թէ . « մէկ լիպրա շաքար ինչ եղաւ .» — « պզտի կատուն կերաւ .» ըսաւ . կատուն կըլեցնիր . երեք քառորդ լիպրաց կըլեց :

Դեճակ մը իրիկուն ատեն երկու դակեկանի հաց գնելու ատենը, հացագործին կըսէ . « ասիկայ շատ պզտիկ և թեթեւ կեռայ ինձի, չեմ կարծեր որ հօտայ մը ըլլայ .» — « Հոգ չէ՝՝ կըսէ հացագործը . քեզի դիւրին կըլլայ տուն տանելը : » Դեճակը դահեկան մը կը դնէ սեղանին վերայ . կանէ կը քալէ : Հացագործը կը կանչէ ու կըսէ . « ասիկայ երկու դահեկան չէ՝՝ — « Հոգ չէ՝՝ կըսէ դեճակը . « քեզի դիւրին կըլլայ հաշուելը : »

Պզտի տղայ մը մօրը անհնադանդ գտնուելովը, մայրը կըսէ « զնա՛ միւս սենեակը, պատրաստուէ՛ որ պիտի պատժեմ քեզ .» — ո՛ր տեղիս պիտի դարենս ,՝ կըսէ տղան . — « ոտքերդդ .» կըսէ մայրը . շատ քանցիւր, մայրը կընայի որ տղան բարձրացեր է, « ի՞նչ է ստ հագա՛նդ .» կըսէ մայրը : « Չորս զոյր ոտքի աման մկղմէկու վերայ . քանզի դու ըմբ որ պատրաստուիմ :

Մեր դրացի պատաւ օր մը ըսաւ . « իմ փրեյի երկէս աղիկ շուն ճանցող զլար . քանի որ ողջ էր խեղճ մարդս, պիտի ո՛ր շունը աղէկ է, քանզի պզտիկութենէ ի վեր անոնց մէջ մեծցած էր :

Ականձով լսելու տեղը ակոյսով լսէ . սեղանի մը վերայ ժաւ մացոյց մը դէր . ապակիի կողմը՝ վար և սեղանին հետացիր որջանը չի լսաւ . ըսենք երեք կանդուն երկայնութեամբ (հոգ չէ, որպիսի երկար ըլլայ) գաւազանի մը ծայրը ժամացոյցին վրայ դէր, ու գաւազանին միւս ծայրը ակունեւրդ կայրուր, ակունեւրդ մատուան ըմբը՝ . ան ատեն ակունեւրդը պիտի լսէ ժամացոյցին թըր թըրը :

Չունի վրայ գիր : Եթէ պզտի կտոր մը փօթափո՛ղ գմելիկ ծայրովը կտոր մը ձիւնի վրայ ճնշեա . նիւթոց քիմիքական ներդրծութեանը անանկ զօրաւոր է որ գեղեկ կարմիր մանուշակաւ գոյն բոց մը պիտի հոսէ :

Մեծկակ խնձոր մը ա՛ռ, ճիւղ մօմի ձևով կտրէ՛ . և նու՛ մալ ճրագի պատրոյ ի ձևով կտրէ՛ . մօմին ծայրը խօթէ՛, բռնկցուր նու՛ ճն ծայրը, որ դիւրութեամբ կը վատի . նեղայ եղունքուն ըսէ . « Ես աս մօմը կրնամ ուտել .» նոյն ժամանակը փշէլը ետքը բերանդ խօթէ՛՝ կը՛ր : Չզիտողները կը դարմանան մօմը ուտելու վրայ : Արիկայ պաղ եղաւ . հէ՛, կաղաչեմ՝ դուն տաքցուր :

